


Handwritten text in blue ink, possibly a signature or name.

Handwritten text in blue ink, possibly a signature or name.

1916

891 99

P - 64



615

ՀԵԱՆՈՒՄ

X-303

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄԱՐԴ

891.99

F-64

1916

891.99  
P-64

13 APR 2011

Հրատարակութիւն Մ. Աղասեանի

Գ. ՔԵԱԼԱՇԵԱՆ

ան. 15.903

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՊՐՕԴՐԵՍ» Լուիս-Մելիքեան փող. № 1.

1916

Այս հատորը պատրաստելիս՝ ինձ համակրել էր մի տխուր  
զգացում—նման նրան, որ զգում է զաւակին կորցրած ծնողը  
նորի աշխարհ գալու նախօրեակին: Դեռ հազիւ աչքերի արցուն-  
քը ցամաքած՝ ժպտում է նա թախծով և սպասումով...

Դրւածքներս հրատարակելու անսպասելի առաջարկից քաղ-  
ցրօրէն տխրած՝ խմբագրելով այս հատորը՝ ես ակամայ միտք եմ  
բերում տարիների թափառումներին միջոցին կորցրած կտոր-  
ներս, դատախազի մօտ մնացած ու մնացած հաստատու աւ թարգ-  
մանական և ինքնուրոյն զրւածքներս և վշտով նայում տարիների  
ապարդիւն թերթումներից մզլած տետրակներին:

Երբ գրում ես ու ստիպւած պահում միայն քեզ համար,  
երբ սրտիդ զաւակները—տղեղ՝ թէ գեղեցիկ այլոց համար—սա-  
կայն թանգ ու սիրելի քեզ համար, անրնգմիջոց դառն հանգա-  
մանքներէ շնորհիւ լոյս աշխարհ չեն տեսնում, այնուհետե էլ սիրտ  
չի մնում ոչ գրելու, ոչ աշխատելու:

Թող չվիրտաւրել հրաաւարակչիս համեստութիւնը, եթէ ա-  
սեմ՝ երախտագիտական ջերմ զգացմունքով լի՝ որ ինքն այդ չի-  
մանալով—փարատում է ինձ գրկող երկարամեայ անտարբերու-  
թիւնը և նորից ինձ դէպի աշխատանք է մղում:

Գ. Դեպաւեան



За тѣх молитвы, кто в грозной битвѣ,  
Кто в плѣну!  
Кто на чужбинѣ в бою встрѣчает  
Теперь весну.

**Т. Щепкина-Куперник.**

CLORIA VICTIS

Սլացայ վերև Հողից սեւաւոր,  
Պայծառ լազուրում  
Իմ նաւն էր ճախրում.—  
Իմ մտքի նման նաւս թեւաւոր:

Եւ բարձր էր ձեգնից թռչիքս անվեհեր.  
Դո՛ւք, որ ծովերում  
Մըրիկ էք փնտրում,  
Մտքերիս ընկեր անկայան ճայեր:

Եւ իմ անուրջներն, օդասլաց եղբայր,  
Սրաթե՛ դու, ցի՛ն,  
Վերև գնացին—  
Սուզւեցին երկնում, երկնում վեհափառ:

Եւ տէր էի ես երկնքի ծովին,  
Իմ երանգ Իկար...  
Հողիս խեղագար՝  
Նայում իր հպարտ յաւերժ արեին:

Եւ ես զգացի անհոն հիացում...  
Եւ փոքր էր, և սի՛ն  
Հողի երեսին՝  
Ինձնով զմայլած ամբոխը ցածում:

Բայց հոգիս զգուղ անսահման լուսում  
Կար վիշտ անանուն,  
Մի կարօտ անհուն,  
Մի անյաղթ անձուկ ինձ ցած էր քաշում:

Եւ յանկարծ ձուլած թռիչք ու անկում՝  
Դարձան զիւթական  
Մի վեհ շարական—  
Եւ յուզւած ամբոխն իմ փառքն էր երգում:

1914

Ծ Ե Ր Կ Ա Մ Ա Ի Ո Ր Ը

(Վիկտոր Հեդոյից)

—Հայր, հօր,—«Գնում եմ առնեմ սուր և զէնք»:  
—Բայց հերիք ենք մենք, քո երեք որդին,  
Դէպի կուի դաշտ անվախ կ'վազենք...  
—«Զորսով ճակատենք արիւնոտ մարտին»:

—Հայր, մէկը ընկաւ, բայց մենք երկուսով՝  
Մինչև վերջին շունչ կ'կուենք յամառ,  
Դու ծեր ես արդէն, ճերմակած մազով...  
—«Երեքով լինենք վրէժի համար»:

—Հայր մէկն էլ ընկաւ, բայց եղի՛ր վստահ,  
Որ ես կը փնտռեմ յաղթութիւն, կամ մահ,  
Յետ դարձիւր, նրանց վրէժն ինձ հաւատա՛...  
—«Մենք կ'մարտնչենք երկուսով հիմա»:

...—Իմ երեք որդին՝ ցուրտ հողի տակին,  
Ես ծեր կամաւորս դաշտումս արիւնի,  
Նրանց, քո վրէժով կանգնած եմ կրկին,  
Ընդունի՛ր զոհն իմ, երկիր հայրենի:

1914

(Կ. Բովմոնտ)

Ես չեմ հասկանում, թէ ինչպէ՞ս միմիանց  
Արիւն են թափում:

Ես ապրում եմ միշտ հրաշքով անանց  
Երազի ափում:

Ես չեմ հասկանում ճիշտ, թշնամութիւն,  
Ես՝ զիջող, բարի:

Հէքիաթ են հիւսում անուրջներս արթուն  
Ոսկի օրերի:

Նրանց բուրմունքով այնպէս եմ լեցուն,  
Լաւ, անյիշաչար,

Որ թէ հանդիպեմ զինւած թշնամուն՝  
Կը ժպտամ պայծառ:

Եւ հաւատարիմ կեանքին լուսափառ,  
Կը կուեմ արի,

Կսպանեմ անձիւ, թեթեւ, քաջաբար,  
Կը մեռնեմ բարի:

Մեռնելիս կ'ասեմ, որ մենք այսօր էլ  
Եղբայր ենք միում,

Այլոց սխալն է մեզ կուրացըրել՝  
Խեղառ վարկեանում:

1916

Պ Ա Տ Ե Ր Ա Զ Մ

(Կ. Բովմոնտ)

Աստուծ իմ, Աստուծ, տանջում եմ, հեծծում,  
Աշխարհն՝ անգութ, չար ես՝ քնքուշ, բարի:

Ես զգում եմ պարզ սոսկալի՝ ցնցում  
Ջախջախւած մարմնի, ոտքի, ձեռքերի:

Եւ պայթող ոռւմբեր, և՛ մրրիկ օդի,  
Խեղադարութեան ճիչեր վայրենի...

Արճիճի համերգ, բուրմունք վառօդի,  
Մարդկային հայեացք՝ անսանձ դադանի:

Մահւան ճանճերի երամներ անափ,  
Որ կարմիր մեղրով մնում են անյազ,

Մատաղ կրծքերին շրապնելի տարափ,  
Մոլի դինամիտ, գնդացիր վայրազ:

Հանճարի ծնած տանջանքներն անծայր  
Ջրվիժում են խենթ, քաօսն է անտակ...

Եւ սիրտ, և՛ երազ—ոտնահար, անճար,—  
Ես՝ քնքոյշ, բարի, ի՞նչ անեմ մենակ:

1915

ԽԷԶՅՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեր կորուստները հսկայ  
Այնքան շատ են, այնքան սուր,  
Հաշիւ համար էլ չկայ—  
Կորուստներին զուր, իզուր:

Ո՛չ մի երգ չի սփռի  
Այսքան մրմուռ ու կսկիծ.  
Երգը սրտին չի խարի,  
Զի՛ ամոքի տանջանքից:

Բոունցը սեղմած՝ լուռ և չար,  
Ոճրանուրջով միշտ յղի.  
Սիրոյ երազ ու տաճար,  
Կործանում ենք կատաղի:

Եւ կորուստներս հսկայ՝  
Դառնում են շատ, մեծ ու սուր...  
Հաշիւ, համար էլ չկայ  
Կորուստներին զուր, ի զուր:

1915

ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՊԱՅԾԱՌ ՅԻՇԱՏԱԿԻՆ

I

Աղջիկը՝ քնքուշ,  
Մեղմաձայն, զգուշ.  
Հիւանդ մօր կողքին  
Իր եղբօր անգին  
Նամակն է կտրդում,—  
Նամակը վերջին,  
Որ կուի միջին  
Գրւած է շտապ,  
Կցկտուր, անկապ,  
Տագնապը սրտում:

Կլլում է կամաց  
Սօսքեր ախրամած,  
Կցում խօսքեր սին.  
Վտանգի մասին  
Լռում է տրտում...  
Արցունքը զսպած,  
Իր սուտով հարբած,  
Կասկածը սրտին  
Սեղգած՝ իր սուտին  
Ինքն է հաւատում:

Եւ նամակը նոյն  
Ամեն իրիկուն՝

Զեկերով տարրերը,  
 Յուսով ու համբեր  
 Միշտ կարդում է նա...  
 Եւ աղջիկ ու մայր,  
 Հաւատով յամառ՝  
 Սպասում են, որ  
 Մի օր բաղդաւոր  
 Նա ետ կգառնայ:

II

Մատաղ եմ, բարի  
 Ու կեանքի ծաբաւ.  
 Ինձ մատնեց ոճրի  
 Մի ձեռք անիրաւ...  
 Ակամայ, բռնի  
 Իմ քնքուշ հոգում՝  
 Արեան, եղեռնի  
 Թոյն եմ բորբոքում...  
 Հոգուս երբեմնի  
 Երազն է զարթնում  
 Յանկարծ—և գաղտնի  
 Սիրտս մթազնում:  
 Բայց խեղդում եմ շուտ  
 Անբջանք, զղջում,  
 Որ զսւր են և սուտ,  
 Պայքարի բոցում.  
 Եւ վայրագ, բռնի  
 Իմ քնքուշ հոգում՝  
 Արեան, եղեռնի  
 Թոյն եմ բորբոքում:

III

—Եղնիկ, ինչո՞ւ ես լալիս,  
 «Անտառն է լճու ամայի»,  
 —Եղնիկ, ինչո՞ւ ես լալիս,  
 «Երանդ տեսայ ամենի»:

Եղնիկ, ինչո՞ւ ես լալիս,  
 «Ես տեսայ տաք, ալ արիւն»,  
 —Եղնիկ, ինչո՞ւ ես լալիս,  
 «Նետահարւեց եղջերուն»:

1915

Ո՛չ փառք, և գանձ, ո՛չ աղատութիւն  
 Ո՛չ ապագայի վառ հեռանկար—  
 Ձեն քաւի այսքան արիւն, խենթութիւն,  
 Ձեն մոռացընի օրն այս խելագար:

Մէկ է ինձ համար, թէ ո՛վ կը յաղթի,  
 ինձ չի հարբեցնի ո՛չ մի առասպել...  
 —Օ՛, թէ ձեզ ներէր բազումը բաղդի,  
 Դուք, որ ովկիանով արիւն էք թափել:

1915

# Գ Ա Յ Լ Ը

Երբ որ թաւաւտում  
 Ահեղ, համարեր  
 Դիշերւայ մութում՝  
 Տեղացին ումբեր—  
 Թռչուն ու դադան  
 Սոսկումով հանուր  
 Եղան ցիր ու ցան  
 Այսուր և այնուր...  
 Եւ անս դաշտում  
 Խուսափած միայն  
 Դառնացած, տրտում,  
 Ձիւ ու ողբաձայն՝  
 Մի գայլ է ոռնում...

Ձագերին անձար,  
 Բունը աւերակ  
 Բաղդը՝ փուչ և չար,  
 Օրը՝ խեղճ կրակ—  
 Վշտով անհատնում—  
 Ողբում է, ոռնում:

1916



1717-89 12

Պ Ա Պ Ի Կ Ի Ն

I

Ես չեմ հաւատում, ես չեմ հաւատում,  
Որ մարդ սպանես, որ արիւն թափես.  
Այնքան քնքշութիւն կայ քո մեծ սրտում,  
Դու լաւ ես այնքան, բարի ես այնպէս:

Դու կ'ափսոսայիր մըջիւնին անգամ,  
Դու կը գթայիր թիթեռին, սէղին.  
Ինչպէ՞ս ես հիմայ այլոց չարակամ  
Հոգիդ նւիրել արեան երազին:

Ես չեմ հաւատում, արիւնոտ փառքին,  
Յաղթող է լոկ նա, ով որ կ'սիրի,  
Յետ դարձիր անգին, յետ դարձիր անգին  
Մեր սարերն անուշ, մեր գիւղը բարի:

Ես չեմ հաւատում, ես չեմ հաւատում,  
Որ մարդ սպանես որ արիւն թափես...  
Այնքան քնքշութիւն կայ քո մեծ սրտում,  
Դու լաւ ես այնքան, բարի ես այնպէս:

II

Երբ որ մի օր մի լաւ օր  
Դու յաղթական փառաւոր՝  
Վահանիդ հետ դառնաս տուն,  
Սփռես չորս կողմ ցնծութիւն.—

Ուզես չափել անջատման  
Կարօտի ծովն անսահման,  
Գիտնալ, որքան ես դժգոյն  
Տառապել եմ լուռ, թաքուն,—  
Թերթիւր տետրակն իմ գունատ,  
Կարգն տողերս կիսատ,  
Որ յուզմունքից խեղդամահ՝  
Վանդ են առել ակամայ:

1915

Քո դէմքն այնպէս վառ էր, ժպտուն՝  
Հիմայ մոայլ, լուռ ես, դաժան...  
— Ես կորցըրել եմ խնդութիւն,  
— Ինձ հետ արիւնն է անբաժան...

Օրերդ էին որպէս գարնան  
Հոգեթրթիւ պայծառ երազ...  
— Միթէ՞ նոքա յետ կ'դառնան,  
— Մահէան սարսուռն է միշտ վերաս:

Ե՞րբ կը դառնաս, ասա, ծիծեռ,  
— Ես էլ չեմ գայ երկիրը ձեր:

Երբ օրերին գարնանային  
Վերականգնենք մեր յարկը հին,

Յետ կը դառնաս, ասա ծիծեռ,  
— Ձէ, էլ չեմ գայ երկիր ձեր:

Կանցնի մրրիկն արեան օրի,  
Մենք կը դառնանք հեղ ու բարի:

Դու յետ չե՞ս գայ, ասա, ծիծեռ,  
— Ես չեմ սիրում երկիրը ձեր:

Ձագուգներդ թևակոտոր  
Մենք կ'յիշենք երգով անդորր...

Դարձիւր, դարձիւր, անսլշ ծիծեռ,—  
— Ա՛հ, նզովի երկիրը ձեր:

Ն Ա Մ Ա Կ Ը

Կասկածի մոլորութիւն,  
 Կրճքիս ահ ու դող՝  
 Քեզ ծանր սրտով  
 Գրում եմ երկտող.  
 Այնպէս, ակամայ  
 Գրում եմ թէկուզ,  
 Սակայն էլ հիմայ  
 Յոյս չկայ հողում:  
 Ու չեմ երազում,  
 Թէ քեզ կ'հասնի.  
 Չեմ էլ սպասում  
 Ես պատասխանի:  
 Եւ ծանր օրերի  
 Սպասման մոլորութիւն՝  
 Ականջս լուրի  
 Լալիս եմ տրտում:

1916

Ճամբի արձագթել թիկնոցի վրան  
 Ժանեակ է հիւսել կարմիր հետքն արեան:

Ի՞նչ ինչ, թէ ով է քայլով երերուն  
 Կարմիր ծորելով քաշ եկել հեռուն:

Քաշ եկել հեռուն ու հետքից նետել  
 Բոցը իր սրտի, տենչը արիւն-թել:

Օտար ափերում իմ սիրտը այնքան  
 Յածել է կորցրել զանձեր դիւթական,

Կողոպտւած, զարկւած կեանքից մահասփիւռ՝  
 Լացել է, վնտրել կորուստներն իր բիւր:

Զարնւել օտարից, մօտիկից՝ աւել,  
 Հարւածի վէրքի, այսպէս է վարժւել.—

Որ հիմայ անյոյզ՝ ճերմակ ձեռն վրան  
 Դիտում է միայն հետքերը արեան:

1916

Ոտնահարւեց բաղմանդամ  
 Եւ գիւղն աւեր է հիւմայ,  
 Ընկած անոյժ, արիւնքամ,  
 Նետւած շտապ, աւամայ՝  
 Փոքրիկ մանուկ մի անճար  
 Ինձ պէս լքւած ու անտէր՝  
 Լաց է լինում չարաչար...  
 Լաց է լինում, յուսում դեռ,  
 Որ մէկն իրեն կ'յիշի,  
 Կամ յետ կղայ բերմունքով  
 Եւ կանչերն իր կը լսի,  
 Ու կտանէ իր մօր քով...  
 Ինձ նման որք ու անտէր  
 Լաց է լինում չարաչար,  
 Եւ հաւատում, յուսում դեռ,  
 Մանուկը խեղճ ու անճար:

1915

Ձուլեցէք, ձուլեցէք գնդակներ,  
 Մատաղ կուրծք, անիւ, այնքանն ու այնքան,  
 Ձուլեցէք, ձուլեցէք գնդակներ:

Հիւսեցէք պսակներ, պսակներ,  
 Դաշտերում ծաղիկները այնքան...  
 Հիւսեցէք պսակներ, պսակներ:

Նւագէք թաղումի քայլերգեր,  
 Մեռելները այնքանն ու այնքան...  
 Նւագէք թաղումի քայլերգեր:

1917

Թանձր քօղով դէմքդ ծածկի  
Քոյր իմ, քոյր,  
Հրապոյրին ունայն կեանքի  
Եղբւր կոյր:

Արնոտ շիրմին դու միշտ գաղտնի  
Ուխտ գնան,  
Թոյլ քո վսեմ վիշտը տեսնի՝  
Միսն չնա:

1915

Մի ողբացէք... Լոկն հպարտ  
Թաղէք ձեր մէջ կսկիծն անծայր՝  
Անգիւնների՝ ընկած, անպարտ,  
Դերիների՝ կորած, անճար:

Համբերութիւն ձեր խեղճ հոգուն,  
Ձեր կեանքերին՝ ցուրտ, ամայի...  
Շրթունք սեղմած հեղ ու տոկուն,  
Պատրաստուեցէք նոր, նոր դոհի:

1915

Այս պայքարին մեծ  
 Բաղդը մեզ գամեց,  
 Կամայ, ահամայ՝  
 Պիտ կուենք հիմայ...  
 Մի կանչի՛ր հաւար,  
 Դո՛ւ, ազգ իմ թշւառ,  
 Վշտերդ խեղդի՛ր,  
 Մեռի՛ր, կամ յաղթի՛ր:

1915

Կը գրկէք մէկ օր գղջումի բոցով  
 Ձեր դահլիճներում—  
 Կը գտնէք միմիանց ամօթով, լացով,  
 Կը հայցէք ներում...

Իսկ մե՞ք! մե՞ք! իսկ մե՞ք, որ անդամձ կորանք  
 Ձեր զոհն անխնայ...  
 Չքացանք, որպէս մի ծուխ, մի պատրանք  
 Ու յետ չէ՛ք դառնայ:

Օ՛, երբ դուք նստէք հաշտութեան սեղան՝  
 Զինաթափ. բարի,  
 Յիշեցէք նրանց, որոնք զոհն եղան  
 Ձեր չար կամքերի:

Յիշէք, ժ, յիշէք կեանքներս մարած  
 Կսկիծով սո՛ւր, սուր...  
 Եւ թո՛ղ ձեզ ներւի ծո՛ւ համատարած  
 Արիւնը մեր զուր:

1916

ՏԻՐՈՋ ՔԱՆԻՇԸ

Հասնում են երկինք բիւրաբիւր խմբեր,  
Թարմ-թարմ հոգիներ մարմնից ազատւած,  
Եւ դրանքս ուզում բոլորն անհամբեր,  
Եւ չի իմանում—ի՞նչ անի Աստուած:

«Ձէ՞ որ դուք երկրում արի՛ւն թափեցիք»,  
Ասում է նրանց Տէրը հայրաբար,  
«Պատկերս վսեմ դձևք խորտակեցիք,  
Ձեզ դէպի դրախտ չկայ ճանապարհ»...

Ճշում են, ճշում,—«Քո փառքի համար,  
Քո Անւան համար մորթեցինք միմիանց».—  
Բոլորն էլ «Դրանխտ» պահանջում յամառ,  
Եւ Տիրոջ ճակտին թախիծ է անանց:

1914

Ն Ա Ի Ա Ս Տ Ի Ն Ե Ր

(Մերէեց)

Ծածանւիր հպարտ, ճերմակ առաքաստ,  
Փայլփիր պայծառ,  
Հրճանքդ աւետիր դաժանատեսիլ  
Ջրերին պայծառ:

Անվերջ ալիքներ կատաղած ծովից  
Մեր դէմ են թռչում.  
Ճայերը ճերմակ վերում ճախրելով՝  
Համարձակ ճշում:

Հայրենի երկիր, մեզ անյայտ ճամբին  
Յաղթանակ մաղթի,  
Ծով, մեր դէմ հանի գոռ ալիքներիդ  
Ջօրքերն արծաթի:

Այս անվերջ ծովում ճիգից, տանջանքից,  
Բնաւ չենք դողում.

Յառաջ, կ'յաղթենք, լացը կ'դադրի  
Հայրենի գիւղում:

Ճամբան է կանչում, կախարդում մթնի  
Խեղառ մրրիկով.

Յառաջ, և ճամբան կ'շառագունի  
Աստղոտ երկնքով:

Մենք շատ հրաշքներ, շատ ցաւ կը տեսնենք  
Երկրում հեռաւոր,  
Կը լսենք մեզ մօտ, սրտի հարազատ  
Երգէր սգաւոր:

Անվախ նաւաստիք, չունենք ան երկիւղ,  
Ոչինչ չենք տեսնում.  
Հպարտ ու ազատ ծովի ճայի պէս  
Յառաջ ենք թռչում:

Թէ զժրախտութեան մրրիկ մեզ հասնի,  
Մեր նաւը փշրի,—  
Նորից ծով կ'եւնեն գնդերն անասան՝  
Հայրենի երկրի:

1912

# Հ Ե Ր Ո Ս Ե Ր Գ

Քարւանը բարձած հաղար լաւ ու վատ՝  
Դարերի ճամբով կ'անց կենայ հանդարտ,  
Կփոխւեն անթիւ պաշտամունք, հաւատ,  
Կը մոռցեն փառքեր, անուններ հպարտ:

Քշիտան ու ստրուկ կը դառնան աճիւն,  
Կը քշեն հեռու հողմի յորձանքով.  
Նոր ցանց կը հիւսէ կեանքը յարաճուն,  
Կը վառէ սրտեր նոր-բիւր բաղձանքով:

Բայց մութ անցեալի մոռացման շերտից,  
Որպէս թուիւթերից արևի մի փայլ,  
Անցնելով անթիւ շուրթից ու սրտից,  
Կ'ապրէ լոկ մի երգ, մի անմար դայլայլ:

Օ՜ վեհ հերոսերգ, հզօր, թրթռուն,  
Դո՛ւ արեւից վառ՝ դո՛ւ յաւերժամեայ.—  
Դո՛ւ զարերի հետ կը թռչէ հեռուն,  
Յաւիտեան անմահ, յաւիտեան անմահ:

Ս. ԶԱԽ.-ԵԱՆԻ ԱՆՄԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Լոկ մի անգամ երկրի վրայ,  
Փայլում է մեզ տեսքը նրա:

Բայց կուրացած լոյս ճանաչում,  
Մեր փնտրածին չենք ճանաչում:

Վատն իր ոտքով յետ կը դառնայ,  
Լաւը կորաւ, կորած է նա:

Լոյս կորածին տխուր երկրում—  
Ել չեն գտնի, զո՛ւր ես փնտրում:

1913

#### ԳՅՈՒԹԵԱՆ ՔՈՅՐԸ

Մայրիկիս պէս լաւ, քնքուշ՝  
Դիթութեան քոյրն իմ վէրքին  
Դարման զրեց և զգուշ—  
«Բնիւր» ասաց մեղմադին:

Եւ մոռացած վիշտ ու մահ,  
Մանկան նման լուռ, անզօր—  
Նիրհով անցայ աղամայ  
Յոգնել էի ես այսօր:

...Փոքրիկ էի ես և թոյլ՝  
Մեր դաշտերում, սարերում—  
Թիթեոնների պէս անդուլ՝  
Խաղում էի, թրվում:

Յանկարծ—հարւած զգացի,  
Նւազ մարմնիս՝ բիրտ ձեռքեր,  
Զուր խնդրեցի ու լացի՝  
Մենակ, փոքրիկ, անընկեր:

Ծեծւած, ցաւած, լալազին՝  
Ես ազատւած տուն եկայ...  
Այնտեղ գտայ մայրիկին—  
Արիւնաներկ, անզգայ:

Եւ ճշացի.—լացակում  
Ես արթնացայ—յիշեցի...  
—Անգլին, ի՞նչ ես փափագում,  
Ծանօթ ձայնը լսեցի:

Մայրիկիս պէս նա քնքուշ  
Շփեց ճակատն իմ դժգոյն,  
Եւ շշնջաց մեղմ, դգուշ,—  
—Բարի գիշեր, հանգիստ քուն:

1914

ԴԷՊԻ ՇԱՅՐԵՆԻՔ

Ժպտում են սիրով լեռներն սպիտակ,  
Լեռներն հայրենի կապտաւուն հեռում.  
Իմ կուրծքն է ծփում կարօտով անտակ,  
Սրտումս յոյսերի խարսճ է վառւում:  
Ողջն քեզ, ողջն, հարազատ երկիր,  
Վո գիրկն եմ գալիս կարօտով, յուսով,  
Իմ կեանքը կրկին տանջւած, տարագիր,  
Մատաղ եմ բերում քեզ վառ երազով:  
Թողի, իմ նժոյգ... ու յետ չեմ նայի,  
Այս օտար երկրից հոգիս է խռով...  
Ա՛խ, օտարութիւն, մաշոյղ, ամայի,  
Անտուն օրերի, գրկանքի բեռով:

Ոյստեղ չեմ թողնում ո՛չ մի լացող սիրտ,  
Ո՛չ մի պայծառ յուշ, երազի վայրկեան.  
Ինձ խորթ մայր եղաւ, հոգեմաշ ու բիրտ  
Այս օտար երկիրն, աշխարհը վէրան:  
Անքուն ու խելառ սև գիշերներ  
Շարանն եմ թողնում, ու թողնում ընդմիշտ,  
Դատարկիւն կեանքիս անմիտ օրերի  
Դարւանն եմ թողնում ու թողնում ընդմիշտ:  
Թիփի ու բորան Մասիսի լանջում,  
Ջան, փոթորկալի, փորձանքոտ ուղի,

Հոգիս իր կրծքում հոտոյդ է թռչում  
 Ձեան փողուց, ասես, հարբած, կատաղի:  
 Մօտ ենք սահմանին... Ես խենթի նման  
 Ձիուս եմ դարկում, թռի, իմ անդին,  
 Տար հոգիս վշտի ծովը անսահման,  
 Իմ կեանքը մատաղ բոլորի կեանքին:  
 Տա՛ր, տուր քարերին, ժայռից ինձ քցի՛ր,  
 Արիւնս խառնի՛ր սրբազան հողին...  
 Եւ ահա, որպէս երազ մի անծիր՝  
 Բացւում է իմ դէմ հայրենի ուղին....

1912

# ԿՈՅՐ ՄԱՆՈՒԿԸ

Դարւանից պոկւած քայլեր էր երկար,  
 Խեղճ մանուկը կոյր օրեր ու օրեր—  
 Եւ աւազներում ընկել էր տկար:

Դողդողում էին ձեռքերն ու ժաթալի,  
 Հայեացքը անկեանք յածում էր երեր,  
 Եւ արիւնոտում շուրթերն հրատապ:

Եւ մանուկն անյոյս, ախ մանուկը կոյր,  
 Աղբիւրին մօտիկ, նստել էր ծարաւ,  
 Մօտիկ աղբիւրին արծաթազանգուր:

Այրւած ու պապակ խորշակն էր ծծում  
 Բիւրապատկելով ծարաւն անիրաւ  
 Եւ հեծկլտալով աղերսում, հայցում...

Եւ այնպէս մօտիկ, և՛ պաղ, և՛ մաքուր,  
 Աղբիւրն էր սահում աւաղի վըայ  
 Եւ մօտ, և՛ անհաս խեղճ մանուկին կոյր:

Վառ երազներում ծարաւից անզուժ  
 Ձէին յագեցնում շուրթերը նրա,  
 Եւ սահում էին ժամերն անօգուտ...

Եւ ալունքներից աղբիւրն անհատնում  
 Ծորում էր, սահում աւաղի վըայ,  
 Եւ նրան մօտ, մօտ մանուկն էր մեռնում:

1915

Տիրեց ինձ մրմուռ  
Ե՛ւ խորունկ, և՛ մեծ,  
Ցանցեց ինձ ամուր  
Եւ սրտիս բաղմեց...  
Պարպեցին չորս դիւ  
Ընկեր ու ծնող,  
Զարկում է սրտիս  
Ամեն մի անցնող:  
Ես ճիչն իմ վերբի  
Խեղդած շարունակ՝  
Ցաւով ամենքի  
Լալիս եմ մենակ:

1915

Ես սիրում եմ տանջանք ու յուզում  
Մոլորած ճամբէքին.  
Երբ լքումն իմ հոգին է մաշում՝  
Ես յուսում եմ կրկին:

Իմ սրտի աւերի մորմոքից  
Ցաւերին ես գերի.—  
Ես սիրում եմ լինել կարեկից  
Ուրիշի վէրքերի:

Իմ միակ ընկերին թողեցի—  
Սրտիս վիշտն անբաժան—  
Մըմուններն ուրիշի թախիժի  
Ես գտայ սիրաբժան:

Ես սիրում եմ մոռնալ ինձ, ձուլւել  
Ուրիշի տանջանքին—  
Ուրիշին իմ սիրուցն առաւել՝  
Գուրգուրել կաթողին:

1912

ԱԻ. ՄԵԼ. ՎԱՐԴ.-ԻՆ

Թօթափիր հագիս, թոթափիր շուտով  
Ոտքերիդ փոշին.

Եւ կեանքը ունայն վայելքի սուտով՝  
Թո՛ղ տուր ուրիշին:

Տես, քանիսն ահա սրտերին մրմուռ—

Մեկնե՛լ են մեզ ձեռք,

Տուր եղբայր, սեղմեմ քո ձեռքը ամուր,  
Բուժեմ ցաւ ու վէրք:

Նայիր, քեզ համար ջարդեցի թևեր,

Երկինք մոռացայ...

Աստղալի երկինք, սիրամէջ ծովեր

Սիրտս՝ քեզ ընծայ:

Տես, առւի վրայ խոնարհած անուժ

Հեծծում է ուռին.

Ես լա՛լ եմ ուղում նրա հետ անուշ՝

Փարւած վարսերին:

Տես օրուայ կումից ինչպէ՛ս է տնքում

Մայր հողն ու ժառանգաւ...

Հո՛ղ, ահա որդիդ, սեղմիր քո զրկում,

Դուրս մայրաբար...

1910

Երանի նրան ով գիտէ տանջւել,

Ուրիշին զգալ իր սրտի նման,

Ի՞ր վէրքը սիրել և շատ առաւել,

Ուրիշին զգալ, սիրել անսահման:

Նեւտում եմ վիշտի անդունդն իմ հողին

Եւ ողջունեմ քեզ մահատէս սուեր...

Ողջո՛յն քեզ, կեանքի արիւնոտ երկին,

Փա՛ռք ձեզ, օրհնու թի՛ւն տանջանքի ծովեր:

1909

Շատ են նոքա, անհաշիւ և ամեն օր, ամեն օր,  
Սեւաւորում են անվերջ թշուառները նորանոր:

Կայարանում հէնց հիմայ անջատուցին շատ-շատեր,  
Անջատումներն անվախճան, վաղն էլ, վաղն էլ կեր-  
թան դեռ:

Ով որ մնաց—վայ նրան, արդէն խեղդող երազում,  
Իրեն այրի է տեսնում, տխուր սկին սպասում:

Ահ, նզովք ձեզ, ու նզովք, որ սե բերիք մեր գլխին,  
Նզովք լինի ձեր անւան, ձեր աշխարհին ու ցեղին:

Ինչքան արցունք թափեցինք, ինչքան սե կայ մեր  
հագին,

Ինչքան աւեր՝ մեր երկրում, ցաւ ու սոսկում ահա-  
գին. —

Բիւրապատիկ, բիւր անգամ—նզովք լինի, քեզ, ոսոխ,  
Որ այսքան կեանք, այսքան, սիրտ—զարկէր, արիւր  
ոտնակոխ:

Եւ անցնում են գլխիկոր սեռագեատներն անհամար—  
Լուռ են նոքա, որպէս վիշտ, գունատ, որպէս պաղ  
մարմար:

Լուռ են... Նզովք քեզ, ես եմ, նզովք—սիրտս է յագ  
ճշում,  
Յաւերթ, յաւերթ կուրութիւն քեզ արևի ճաճանչում:

Հարադատներդ կարօտ՝ փախչեն քեզնից սարսափած,  
Ահով մութին սպասես, մահով տեսնես լուսարաց:

Նեխումն զգաս դիակի գգւանքներում պաշտածի,  
Մեռնողների հոնդիւնն անվերջ թող քեզ հալածի:

Եւ ծարաւես զովութեանն արցունքների մարգարիտ,  
Աղբերակներդ ցամքեն, կրակ զգաս աչքերիդ:

Կեանքից դարձած՝ մահ տեսչաս, մահը քեզնից խուսափի,  
Ապրես, ապրես, մահացած հոգիդ մատնած սարսափի:

Եւ մեռնելով բիւր անգամ—նորից ապրես անսահման,  
Եւ դամբանումն էլ ապրես, ճնշեն քեզ հող, գերեզման:

Օ, նզովքներ—կսկիծի անոյժ շիթեր սուտ ու սին...  
Մեր կսկիծին արժան երգ չկայ երկրի երեսին:

Ահ, այրինք, զորեղից գտնեմ ովկիան արտասուք,  
Որ լամ, ինձ հետ զարե՛ր լան ձեր տրտմութիւնն  
ահաշուք:

Նրանք, որ սե են հագել, նրանք հիմայ որ հագան,  
Նրանք, որ սե են հագնում երազներում խօլական:

Իսկ նրանք, որ խաբրիկի սպասում են յոյսն արթուն,  
Եւ յաւիտեան, յաւիտեան պիտ սպասեն ապարդիւն:

Ի՞նչպէս մենակ այսքան ցաւ պատմեմ, սգամ միառմի-  
նդովք, նզովք քեզ յաւերժ արիւննարբու թշնամի...

1914

Ե Ր Կ Ո Ւ Ա Յ Ր Ի

Ես չեմ իմանում, թե՞մ գանգատ անեմ վիճակիցս չար,  
Ո՞վ է ինձ հարւած տուող թշնամին, սեւերիս պատճառ:  
Երէկ ես տեսայ յի մատաղ կնոջ, ինձ պէս վշտակիր,  
Դիտէի, որ նա սիրահար ունէր այլազգ, տարազիր:  
Նա նայեց սեխ՝ հաղիւ զսպելով բերկրանքն իր սրտի...  
«Ինչո՞ւ, շշնջաց, դուք պատճառ գարձաք արիւնի  
վշտի:

«Ինչո՞ւ կորցեցիր գանձը իմ անգին ու յետ չէք տալիս:

«Ինչո՞ւ ջարդեցիր կեանքը իմ մատաղ, ո՞ւր է անձ-  
կալիս,

«Հա, օտար էր նա, թշնամու երկրից, ասացէք, ի՞նչ  
լինչ,

«Նա լսւ էր ձեզնից, նա սիրում էր ինձ ջերմեռանդ  
ու ջինջ:

«Հիմայ ես ձեր մէջ օտար եմ, լքւած հարազատ եր-  
կրում,

«Ասացէք, ինչո՞ւ տարաբաղդ, անտէր սեւեր եմ կրում»...

Ուզեցայ նրան գրկել, լսել ու լալ, և ասել շատ բան...

Կարկամեց լեզուս, շրջեցի լո՛ւն, անցայ իմ ճամբան:

Մաշում եմ հիմայ օրերս ունայն, լալիս բազդն իմ չար,

Ու չեմ իմանում, թէ՞ թե՞ համարեմ ցաւերիս պատճառ:

916

49

Մի զարմանալի, մի հին աշխարհում—  
Վերև նայելու չկար էր հրաման,  
Եւ ով յանդգնում, երկինք էր նայում,  
Շղթայում էին զաղանի նման:  
Վիզն էին քցում ծանր ու ճնշող,  
Մէջքը կռացնող կապանքը դժնեայ,  
Եւ ափսոսանք արմին ոսկեշող,  
Եւ երազ սասողեր մոռանում էր նա:

Երբ ես ծնւեցի այդ տխուր երկրում,  
Վերև թռչելու ծարաւով անմար—  
Իմ հայրն իր վզին շղթայ էր կրում,  
Շղթայ էր կռում նաև ինձ համար:  
Ես տեսնում էի հսկայ դարբնոցում—  
Շղթայաւածների բազմութիւնն անծայր,—  
Գիշեր ու ցերեկ շղթայ էր ձեծում,  
Անվերջ նզովում արևը պայծառ:

Եւ իմ մանկական երկնասլաց հոգում  
Կտաւելում էին զայրոյթի ամպեր,  
Եւ խորթ և՛ օտար, դաժան և՛ տրտում  
Սպառում էի ժամիս անհամբեր:  
Եւ ժամս հնչեց, որպէս սանձարձակ  
Հրեղէն թարթառ նետուեցի հանդէս,  
Եւ ճակտիս թախիժ, և՛ լուսապսակ,  
Իսկ իմ դէմ ամբողջն ստրուկ, գորշատես...

«Փառք վե՛հ արևին, աստղոտ երկնքին,  
«Արշալոյսների ծովերին բոսոր»...  
Եւ ամբողջ լուռ, սարսափը դէմքին  
Ականջ էր դնում իմ երգին հօրը:  
«Օ՛, նայիր վերև, կուրացած ամբոխ,  
«Որպէս կռապաշտ. ծնրիր արևին,  
«Կապանքը ժանգոտ ջարդէր ոտնակով,  
«Ու նետիր հոգիդ լազուրի ծովին:

«Կործանումների, դիերի միջով՝  
«Հրդեհ ծաւալէր դու համատարած—  
«Եւ հիացումի հրճանքի ճիչով  
«Գորշ-գորշ շարքերով խոյացիր յառաջ:  
«Յառաջ ու յառաջ, ամբոխ, զանր ու զարկ,  
«Կործանիր այսօրն ու վաղն ստեղծի,  
«Զանրկ երէկը քո գունատ ու անփառք,  
«Մկրտիր արեամբ ու շնչով բոցի:

«Զանրկ ու զանրկ, ամբոխ և գետնահարի  
«Պատնէ՛շ ու կապանք, և ամեն արդելք,  
«Եւ բազուկներով հոժկո՛ւ, քաջարի  
«Տո՛ւր չորս հոգմերին անցեալը անելք:  
«Եւ քո զայրոյթով երկրագունդը հին  
«Մրկահարէ, ու փոխիր նրան,  
«Փոխիր քո կամքով կամքը երկնային,  
«Կորդիր իր գահոյքն ու բազմիր վրան»:

Եւ յանկարծ ամբոխն հեղեղի նման  
Շարժեց, պոռթկալին ճիչեր խելագար,  
«Վերե նայելու չկայ հրաման» —  
Եւ ոտնահարեց մարմինս տկար:  
Եւ ես մեռնելով՝ պայծառ անըջում  
Լսում էի դեռ նւագն իմ երգի,  
Որ ծաւալւելով հնչում էր, հնչում,—  
Գովքն ազատութեան, լազուր երկնքի...

1-15

Հաղա՛ր ափսոս, որ այսօր էլ՝  
Անցաւ անյոյս ու դողդոջութիւն,  
— Քանի՛ր այսպէս օր է կրելի:

Գիտեմ, որ վաղն էլ անզգայ  
Ինձ չի՛ երդի քաղցրահնչիւն,  
Վաղեան համար էլ յոյս չկայ:

Ինչպէ՛ս սակայն կ'ցանկայի՛  
Ապրել, ապրել, լսել հարբած —  
Թովի՛չ քայլերն ապագայի: —

Եւ վաղօրօք, մանկան նման  
Հրճւել անսանձ ու սրտաբաց, —  
Տանջանքներով խենթ սպասման...

Ծանր է տեսնել մի՛շտ անբաժան  
Քեզ ուղեկից ամպոտ օրեր,  
Ծանր է լինել չն՛ր ու դաժան...

Ես կուզէի պայծառ ու վառ, —  
Ի՞մ շուրթերից դարուն բուրէր. —  
Բարի՛ր, ուրախ սիրտս հեար:

Բայց գազաղած ու մտազրաղ,  
Ջղածգօրէն բռունցք սեղմած՝  
Անց եմ կացնում օրերս պաղ:

Որպէս զարկեր սուր դանակի՝  
Հո իջում են սրտիս կամաց  
Հարւածները ժամանակի:

Ինչպէս որ միշտ՝ թւաց այսօր—  
Լոյս արեն ինձ կտայ ողջոյն՝  
Մի նոր կեանքով պայծառ, հզօր,—

Բայց ֆնացի ես այսօր էլ  
Անյոյս, դաժան ու դողդոջուն  
— Քանի՜ այսպէս օր է կրելի:

1914

Եղանւածը՝ մի թարու թիւն է,  
Անյայտ կորածը՝ յարատե ցաւ.  
Նրան միշտ սպասում են:

Մերնէ.

— Է՛, առաջ բարի:— Բարե՛ ծերունի:  
— Հեռուից ես գալիս, օրհնւած լինիս դու,  
Քո ճամբան չարից միշտ ազատ լինի,  
Քեզ առաջնորդի աստղ լուսատու:

Դու անց ես կացել երկրից-երկիր,  
Շատ մարդ ես տեսել հեռու ակերում,  
Մի որդի ունեմ կորած, տարագիր,  
Դուցէ մի բարի լճւր ես ինձ բերում:

— Որդի՞ս... թիկոտ է, մի չքաղ հսկայ,  
Բարձր՝ ինձանից, տեսքը գեղանի.  
Օ՛, նրա հատը մեր գիւղում չկայ,  
Սիրած է անչափ, մեծ պատիւ ունի:

Մի մանկան նման քնքոյշ է որդիս,  
Մըջիւնին անգամ ցաւ չի պատճառել,—  
Երկինքն է գուցէ նախանձել բաղդիս  
Եւ դանձաւ անգին ձեռքիցս առել:

Այնքան վե՛հ է, այնքան թանգ է նա,  
Նրա անունով չեմ երգւում անգամ,

Տատասկը ճամբրիդ ճերմակ վարդ դառնայ,  
Չես տեսել նրան, աղնիւ բարեկամ...»

Ճամբորդն է անցնում մոլորած, շւար,  
Չըզիտէ նոյն իսկ ինչ սաի նրան...  
Մնում է մենակ ծերունին թշւառ  
Եւ ճամբրի վոշին մաղւում է վրան:

1914

Ե Ր Ա Ձ

Երազիս մէջ՝ ինձ ասացի,—երանգ է սա,  
Մի խաբուսիկ և անմարմին աշխարհ տեսայ:

Բայց սեղմեցի, որ չզարթնեն աչերս յոգնած,  
Եւ իմ հոգին երազներիս գերի մնաց:

Սառը պատեր, մռայլ օրեր թողած յետե,  
Արձակ դաշտով վազում էի սիրտս թեթե:

Ես հաւատում, ժպտում էի իմ երազին,  
Եւ շլացած նայում հոգին, ջրին, լոյսին:

Որքան է լաւ, որքան դիւթիչ աշխարհն անծայր.  
Որքան է շատ օղը անուշ, լոյսը պայծառ:

Շնչում էի ծարաւ կրճքով, վազում անվերջ,  
Եւ վայելում ամբողջ մարմնով տեսիլքը պերճ:

Եւ հրճանքից կամաց լալով լոյս երազում՝  
Ես արթնանալով բնաւ, բնաւ չէի ուղում:

1914

Ա Ջ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Համբոյր եմ տալիս ես խոնաւ հողին,  
Առւակում անսկիւր ճակատս թրջում,  
Սեղմում եմ կրծքիս տերեւը դեղին,  
Չուղ հաւքերի յետքից անընդամ:

Փողոցի ճիւղին մտքերս եմ ձուլում,  
Կուրծքս բաց անում մաղւող անձրեւին,  
Հրճւում ինձանով լճի հայելում,  
Զմայլած հայում մարող արեւին:

Ողջոյն եմ տալիս անծանօթներին,  
Դաժան դէմքերին եղբօր պէս ժպտում,  
Մօտենում սիրով մուրացկաններին,  
Ձեռքերը սեղմում ու տալիս խոստում:

Աշխարհը յանկարծ այնպէ՛ս լայնացաւ,  
Ես չեմ իմանում ո՞ր կողմը վազեմ...  
Շղթայից յետոյ՝ էլ թիւ չէ վիշտ ու ցաւ:  
Զքնաղ չէ՞ միթէ այս կեանքը վսեմ:

1914

Գ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Որպէս առասպել  
Հայրենիքս հեռու, մենակ եմ, շւար.  
— Ինձանից առաջ այս բանտում խաւար  
Ո՞վ է տառապել:  
— Ո՞վ է իր տենչերն, իր երազը վառ,  
Յոյսերը պարպել  
Եւ նրանց համար անգօր ու թշւառ  
Արտասուք թափել:

Տեսնես կեանքն հեռուում  
Եռնւմ է դարձեալ թովչանքն իր գրկում...  
Անցեալը երբեմն ինձ կորած, անգին  
Երազ է թւում:  
Ա՛հ, աղատութեան օրեր ցնծաղին  
Սիրտս էին թովում,  
Տեսիլքներ չէին, որ կորան կրկին  
Մշուշի ծովում:

Հարադատ ավում  
Վառւում է տեսնես արեւ բարի.  
Ուռիքը կազմած կանաչ շուրջպարի  
Անճշտ սօսափում:  
Երազներս արդե՞ծ մեր անգին երկրի  
Սիրտս չէ՞ն խալում,  
Եւ զուր չէ՞ն աչերս պղտոր ու վայրի,  
Արտասուք թափում...

1914

Ք Ո Ւ Ն Ը

Ինչո՞ւ անդինս, էլ չես գալիս ինձ այցի,  
Ձե՞ս հաւանում ննջարանին իմ անշուք,  
Ես քեզ այնքան աղօթեցի ու լացի,  
Աչքերիս մէջ էլ չը մնաց արտասուք:

Վախենում ես պահապանիցն եմ արթուն.  
Ոլոր-մոլոր միջանցքներիցս ես շւար...  
Դու, ձանձրոյթից, անձկութիւնից փրկութիւն,  
Միակ ժպիտ գոյութեան մէջ այս խաւար:

Եթէ քեզ միշտ անանց թւայ դուռս ամուր,  
Սարսափեցնեն մռայլ ճաղերս այս մթնում,  
Ապա ի՞նչպէս մենակ տանեմ ցաւ, մրմուռ,  
Որակե՞ղ թաղեմ գիշերներս անհատնում:

1914

Ա Ք Ս Ո Ր Ը

(Ջերմօրէն նաժակին)

Դատաստանս եղաւ վճռական ու կարճ,  
Դռները բոլոր փակեցին յանկարծ,  
Այս լաւ աշխարհում իմ բաղդը խոպան  
Ինձ բաժին թողեց Արարիոյ ճամբան:

Աւազի ծովով՝ մռայլ, անդիւման  
Մեր խումբն է անցնում սուերի նման,  
Քնքուշ ձեռքերիս զարկել են շղթայ,  
Ոտքերս է կռծում կապանքն երկաթեայ:

Հալածում են մեզ պահակները քար,  
Մեզ քաղցն է ժաշում ու ճամբան երկար.  
Ընկածի մասին էլ չեն փսոսում,  
Թաղում են արագ փխրուն աւաղում:

Աքսորն է նայում խօլ ու սեւամած,  
Հեռում հայրենիքս ու մահն իմ զիմաց.  
Դահլձձներս են լուռ սոսկումով յղի,  
Օրհնելած լինես, տանջանքի՜ ուղի...

— Իմ քնքուշ քոյրեր, իմ խեղճ հայր ու մայր,  
Լացէ՛ք ինձ համար, լացէ՛ք ինձ համար:

1914

Երանի նրանց, տէր են եղել իրենց օրերի,  
 Եւ որ մի վարկեան չեն կրել աքսոր, չեն եղել գերի:

— Ինչո՞ւ չես խնդում, դու չե՞ս երջանիկ, ո՞վ աքսորա-  
 կան,  
 Դժգոհ ես միթէ, որ նորից տեսար հողը հայրական:

— Իսկ այն, որ կտրան, իսկ մաշած օրերս վշտերի հովտում  
 Ո՞վ ինձ յետ կտայ... ո՞վ ինձ յետ կ'տայ անցեալս  
 արտում—

Ապարդիւն անցած, որ նայում էր ինձ այսպէս յո-  
 սալի,  
 Ո՞վ ինձ յետ կտայ իմ չ'վայելած հրաշքն անցեալի:

Այստեղից տարայ լուսեղէն ժպիտ ու պայծառ հայեացք:  
 Որ ամեն ինչի նայում իր վստահ ու տեսնում հիացք:

Ես անցնում էի համարձակ ու սէգ, որպէս մի արքայ:  
 Սրտիս ինչ երազ, ինչ սպասումներ, ինչ հաւատ հսկայ:

Բայց նաև սուղեց տակու բեռներով ծովերումս օտար:  
 Մաղապուրձ եղայ դատարկ ձեռներով մուրացկից վատ-  
 թար:

Եկել եմ հիմայ դաժան ու կնճոտ, վախկոտ, վզաճուկ:  
 Ու չեմ յանդգնում շրջելու մարդկանց հայեացքս խղճուկ:

Երանի՜ նրանց, որ տէր են եղել իրենց օրերի  
 Եւ որ մի վարկեան չեն կրել աքսոր, չեն եղել գերի:

Նայառ ոտքերիս արիւնը քամեց բիւր կածաններում,  
 Ա՜հ, օտարութիւն, տմարդի, խճրթ մայր, քար ու  
 աններում:

Մասսի գազաթին իջնում են ամպեր, քարւան մշուշի,  
 Դիւիս էլ աւել ուղիներն օտար մաղել են փոշի:

Եւ երբ հողմավար մեր երկիրն ընկայ—չգիտեմ ինչ-  
 պէս.—

— Ո՞վ է մնացել,— մրմնջում էի— ու մաշում ճամբէս:

Յանկարձ կածանի ժապաւէնը հին բացեց տիրաման:  
 Եւ մեր հարազատ տնակը նորից տեսայ իմ դիմաց:

— Ո՞վ է մնացել.— ուզում էի ես ճշաւ արցունքով,  
 Եւ սրտիս երկիւղ անցայ կասկածով մեր մաշած շէմ-  
 քով:

Թաղած այդու պէս ամայի գտայ մեր տունը նախկին,  
 Մերայիններից ոչ ոք ընդառաջ չ'եկաւ խնդաղին:

Եւ ցաւած սրտիս ժամը մօտ թւաց եմ հոգևարքի,  
 Ընկայ թևաթափ մոխիրների մէջ հայրական յարկի:

Երանի՜ նրանց, որ տէր են եղել իրենց օրերի  
եւ որ մի վարկեան չեն կրել աքսոր, չեն եղել գերի:

Մեր երսմը մեծ քամին դառնաշունչ արաւ ցիր ու ցան,  
Երանի՜ նրանց, որ կորցընելու ոչինչ չունեցան:

Երանի՜ նրանց, որոնք չ'ունեցան մայր ու հայրենիք,  
Չոր քարի նման եկան այս աշխարհ, կ'երթան երջանիկ:

Որ յետ նայելու չեն զգում փափագ յօշոտւած սրտով,  
Երանի՜ նրանց ու նրանց կեանքին՝ անվիրտ, անվրդով:

19.4

Սառած երկրից գէպի հարաւ էր թռչում,  
Մոլար կռունկն ու ջերմ արեւ անըջում,  
Եւ կէս ձամբին հուր շողերի միշտ ծարաւ,  
Օտար երկրում, փոթորկի մէջ նա կորաւ:

Նրա եղբայրն էմ ես, չորս կողմըս բորան,  
Որտեղ, իզո՛ւր, խեղճ ընկերներս կորան,  
Եւ փետրաթափ երազներս լուսածին,  
Դառը հողմից յաւերժօրէն մարեցին:

Ճամբաս կորաւ... օտար ամուսն երերուն,  
Անյոյս հայեացքս յառել էմ ես հեռուն...  
Ես թպրտում, ես խեղդւում էմ բորանում,  
Եւ զո՛ւր, ի զո՛ւր մայր երամն իմ որոնում:

1912

Բանտիս միջին այս պահուն՝  
Մենակ եմ ես և անդորր.  
Եւ լուծիւնն է անհուն,  
Լուծեան պէս վիշտս խոր:

Ի՞նչ ընկերներ կորցրի,  
Ի՞նչ յոյս, երանգ կար սրտիս...  
Սիրտս լոյսին էր գերի,  
Բանտ ու խաւար է չորս դիս:

1914

Քամին է բերում՝ անանուն, անտէր  
Մի ցաւոտ երգի տխուր մեղեդին...  
Հեռո՛ւ աշխարհում կան մռայլ պատեր,  
Ուլքեր են տանջում պատերից էն դին:

Օտար դաշտերում՝ մեր կեանքն անտէրունջ,  
Մեր դարդերը մեծ՝ շղթան է երգում...  
— Լճու, մի գաղաղիր, քայլիր անմըռունչ,  
Ու ճիշդ խեղդիր քո ցաւած կրծքում:

Բազդ ու խնդուծիւն փարում են հոգուդ,  
Բաղդաւոր եղբայր, հրճանքներդ անշէջ,  
— Ո՞ւմ է մոռացել քո սիրտը անգութ,  
Ո՞վ է տառապում շղթաների մէջ:

Հեռո՛ւ մի վայրում կան պատեր մթին,  
Որ ցաւը դրկած պապանձեւ են լուռ...  
— Ո՞վ կը ձայնակցէ իմ լացող սրտին,  
Ո՞վ կը հասցնէ եղբայրներիս լուր:

1911

Ո՞ւմ եմ կարօտել, ինչի՞ եմ ծարաւ,  
Ինչո՞ւ եմ այսքան անսահման յոգնել,  
Իմ զըւարթ կեանքի հանգիստն ո՞ւր կորաւ,  
Ինչո՞ւ ողջ գիշեր չեմ կարող քնել:

Իմ պաղ վանդակում քայլում եմ մենակ,  
Եւ անթիւ մտքեր հոգիս են յուզում...  
Այն ո՞վ է դրսում լալիս շարունակ,  
Անձրեի տակին այն ո՞վ է մըսում:

Իմ յուշերն են այն, որ լուսամուտով  
Խուժիլ են ուզում, մորմոքով կանչում...  
Հարազատ դէմքեր, ծածկւեցէք մութով,  
Քուն, մոռացութիւն, ես ձեզ եմ տենչում:

Անձրեք դրսում լալիս է, լալիս,  
Իմ սիրտը այնպէս, այնպէս է յոգնել...  
Կարօտ յուշերն ինձ հանգիստ չեն տալիս,  
Ողջ գիշերն անցաւ, չեմ կարող քնել...

Ինչպէս տերեւ անասն քամու ձեռքին գերի,  
Ինչպէս տաշեղ վարար գետի յորձանուտում,  
Աստանդական, հոգիս անձաւ սե մտքերի,  
Գնում եմ ես՝ կեանքս յոգնած, դէմքս տրտում...

Գնացքն անցաւ իմ հայրենի գիւղի մօտով,  
Ձեն թողնում, որ տամ հրաժեշտ քեզ, մայր անգին,  
Օ՛, դու կզգաս քո սիրածուկ քնքուշ սրտով,  
Որ այնքան մօտ է սաւառնում որդուդ հոգին:

Եւ գրկարաց դուր կապտես կարօտակէզ,  
Մայր իմ, գուցէ էլ չը տեսնես ինձ յաւիտեան,  
Միայն մտքով եմ ուղարկում համբոյրս քեզ,  
Օրհնի՛ր ինձ, մայր, տխուր ճամբումն անյայտութան:

ԹՇՆԱՄՈՒՆ

Յ Ե Ն Ա Մ Ո Ւ Ն

Երբ ոսկրապատ մեր դաշտերով տուն յետ դառնաս  
յազեցած, գոհ,  
Դու չես լսի կանչն այն ահեղ — «Կայեն, սէր է եղ-  
բայրը քո»:

Կամ արիւնոտ այդ ձեռքերով փոքրիկներիդ երբ որ  
գրկես,  
Դու չես լսի խեղճ մայրերի հեծկտանքները սրտակէզ:

Երբ գայ մի օր և կատարենք այս խենթ շրջանն ա-  
րիւնսամած,  
Եւ խելասթափ կանգնես նորից աշխարհի դէմ, մարդ-  
կանց դիմաց: —

Սոսկումների նախօրեակին քո համբոյրներն յուղայա-  
կան  
Եւ այսօրուայ վազքը մոլի վոհմակներիդ ստոր, վարձ-  
կան: —

Եւ կռնակից տմարդ հարւած, յօշոտումներ անմիտ,  
անդուծ,  
Հրդեհների արշալոյսներ, ծաղկած երկրի աւերակոյտ: —

Արիւնաշուրթ, կմոռանամ, դու կմոռնամ երբ գայ  
Եւ սթափւած ժղձաւանջից չնչենք աղատ ու բազդա-  
ւոր...

Քո սերմանած, քո ծաւալած, այսքան անկում,  
այսքան ցաւեր  
Դու կմոռնամ, կմոռանամ այս խենթ օրերն աշ-  
խարհաւեր...

Էհ, դու մոռանաս, մենք չենք մոռանայ  
Մենք չենք մոռանայ—և երկար, երկար...  
Մենք չար ենք հիմայ, դաժան, անխնայ  
Եւ քո արիւնին ծարաւ, խելագար:

Ո՞վ քեզ մեծարեց մեր երկիրը հիւր,  
Ո՞վ էր աչք դրել քո կտոր հացին.  
Մէկ էիւ տալիս, ստանում հարիւր,  
Եւ ծծի նման սնւում մեր ծոցին:

Մեր երկիրը սուրբ մեծ էր և անախ,  
Մենք կարօտ չէինք հողի, աւարի.  
Մենք ապրում էինք երգով անտազնապ,  
Շնչուն ծիծաղում ու ժպտում ըստի:

Գրւած է վաղուց, «սիրեցէք միմիանց»  
Մենք սիրում էինք, հաւատում անծայր,  
Որ արեան օրերն անցել են անդարձ,  
Որ լաւ են մարդիկ, սրտերը պայծառ:

Բայց դու, թշնամի, նենգ ու տմարդի,  
Քանդեցիր մեր մէջ յոյսի մի տաճար,  
Դու մեզ քաշեցիր արիւնոտ մարտի,  
Եւ մեր ոճերին դու դարձար պատճառ:

Էհ, ինչ մոռանանք, այդ չենք մոռանայ,  
Եւ չար ենք արդէն սիրով ու կամայ,  
Եւ հարւածը մեր դաժան, անխնայ—  
Ընդունէ հիմայ, ընդունէ հիմայ:

1914

Ես լսում եմ ձեր դիրքերից երգի ձայն,  
Այնքան անձկոտ, անընկալ ու քնքոյշ,  
Եւ երազում, «մաղձ ու վրէժ չքացան,  
Դուք մտերիմ ու հարազատ էք հոգում»:

Դուք բաղխում էք արեւցուծեան զրոհում,  
Եւ ափսոսում ձեր մահացու հարւածին.  
Ես տեսնում եմ ամեն ընկած նոր զոհում  
Եղբայրութեան մարտիրոսներ լուսածին:

Թշնամիներ, արիւններաղ, յիշաչար,  
Ձեմ հաւատում ձեր չարութեան, ձեր ոխին,  
Ես սիրում եմ ձեր հոգիները պայծառ,  
Եւ հաւատում ձեր հոգեթով ծիծաղին:

Օ՜, յետ հաճանքէք հարւածով խելառ, կեանքի եմ  
ծարաւ,

Ո՞վ ձեր մէջ վառեց եղբոր արիւնի հրդեհն անիրաւ:

Ձէ ո՞ր դարերի երազներ ունենք ապրած միատեղ,  
Ձէ ո՞ր մեր սրտում փայլում էր սիրոյ լուսասփիւռ  
կանթեղ:

Արիւնով հարբած իմ խեղճ եղբայրներ, ինձ չէք ճա  
նաչում...

Կարացա՞ք միթէ հրդեհների մէջ, ուղմի ճաճանչում:

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

Ճամբան է երկա ը,  
 Աքսորը դաժան  
 Եւ մայրս տկար,  
 Ինձանից բաժան՝  
 Ոտքերն ուժասպառ  
 Քարշ է տալիս թոյլ...  
 Եւ վայրենաբար  
 Դահիճներդ անդուլ՝  
 Քշում են, քշում  
 Քեզ մայր իմ, սուրբ, սուրբ...  
 Հեռով մշուշում  
 Լուսակերտ ու նուրբ  
 Դու ժահ չես փնտռում.  
 Յոյսն է քո հոգին  
 Երազով վառում—  
 Եւ քո զաւակին՝  
 Քնդցր հարազատ—  
 Տեսնում ես կրկին  
 Յաղթական, ազատ:

Եւ ահա նորա  
Գնում են կրկին  
Խոհերը հսկայ,  
Երազներ կրճքին:

Դարերի տենչի, յոյսի մարմնացում—  
Վառում են կրկին թռիչք, հիացում:

Ողջոյն ձեզ, ողջոյն  
Մեր սարից, ձորից,  
Ուր ձեր խրոխտ չուն  
Շարժում է նորից...

Դուք, որ աշխարհում հանգիստ, լայնարձակ՝  
Պայքարի փշոտ ուղին ցանկացաք.—

Դուք, որ վառեցիք  
Մեր թմրած հոգուն  
Երազ գեղեցիկ,  
Հեռուն ոսկեգոյն—

Ձեզ՝ համբոյրը մեր, մեր սիրտն ու հոգին,  
Ձեզ՝ փառք, օրհնութիւն, հերոսներ անգին:

1914

ՕՐՀԱՌԻԹԻՒՆ ՔԵՁ!

Օրհնութիւն քեզ, աւեր երկիր,  
Ազգ տարագիր,—  
Դարեր այսքան  
Հալածական...

Օրհնութիւն քեզ, աւեր երկիր:

Դու, որ մոխրից վեր ես կենում  
Ու չես մեռնում,—  
Եւ դարէդար՝  
Միշտ գեղնահար,—

Բայց միշտ մոխրից վեր ես կենում:

Երազներով հոգիդ վառած,  
Բազկատարած,  
Լոյս անրջում  
Վեր ես թռչում,—  
Երազներով հոգիդ վառած...

Օրհնութիւն քեզ, ազգ պանծալի,  
Որ անցեալի  
Անկումներից  
Բարձր ես նորից...

Օրհնութիւն քեզ, ազգ պանծալի:

1916

Օ՛ր, ազատութիւն, արձակ դաշտերի՛  
Բուրմունք հոգեթով.

Անմահ պալատան լքած սրտերի...  
Երկունքով, վշտով,

Արեան ծովերով քեզ տւինք սնունդ,  
Եւ դարէ ի դար՝

Քեզ առաքեցինք սերնդից սերունդ  
Մեր աղօթքն արդար:

Ե՛ւ կոյս անտառներ, և՛ ծովեր անափ  
Լեռներ վեհատես,

Կենսալի դարուն, զարթնում ու տալնապ  
Եւ կեանքի հանդէս,

Ոսկեղէն ճամբան անմահ արևի,  
Լազուրը անծայր,

Եւ տարափը խենթ առատ անձրևի  
Կայծակը պայծառ,—

Բոյրերը բոյոր, հողմերը արթուն՝  
Քո վսեմ թագի

Մի քարն են միայն օ, ազատութիւն,  
Դու, յոյսը կեանքի:

Եւ քեզ խնկարկող վշտի խորանում  
Ընկած ինքնակամ՝

Յոգնած բազուկնիս քեզ ենք կարկառում՝  
Խեղճ, արիւնաքամ:

Որպէս երաշտից արտերը խորով՝  
Թուխպին են նայում,—

Կամ օազիսն է ճամբորդին սիրով  
Կանչում, հմայում,

Որպէս բուք օրին զուր ժօրն է կանչում,—  
Որբուկը անտուն,

Այնպէս մեր հոգին քեզ է՝ անըջում,—  
Օ՛ր, ազատութիւն:

Դարեր քեզ համար շղթայ կրեցին...  
Եւ դարէ ի դար

Նոր-նոր զոհերի շղթայ կոեցին  
Դահիճներն վատթար:

Մայր հողի գրկին չը փնաց երկաթ,  
Հերիք չէ՞ արդեօք

Մեր սրտից ծծէ արիւնը կաթ-կաթ՝  
Վիշտը անողոր:

Բիւր սերունդների տառապանքն անծայր,  
Արիւնի գետեր,

Եւ խարոյկների բոցերը պայծառ՝  
Մթթէ քիչ են դեռ:

Եւ քո տաճարում, ուր զոհերդ անծայր՝  
Շարւած են անթաղ,

Ընկնում են ահա նոր զոհեր պայծառ,  
Ու կեանքեր մատաղ:

Բայց դու, բաղդի պէս անողորձ, դաժան,  
Խնւլ ես մեր կանչին,  
Միթէ պիտ թաղենք տենչեր սրբազան  
Եւ երազ վերջին...

Միթէ առյաւէտ սեղանիդ դիմաց—  
Մարե՛նք անկրակ.  
Մեր յօշոտ կեանքի շէնքը տխրամած  
Դարձնենք աւերակ:

Յաւերժ աւերակ... և՛ ճիգ, և՛ արիւն,  
Արցունք անպատում  
Կորչեն և քնայ մեր անւան ուրուն  
Թշուառ ու տրտում...

Ա՛հ, երկնասլաց իմ խեղճ ժողովուրդ,  
Հրաշքի ծարաւ...  
Քո տենչերի դէմ վե՛հ, մեծախորհուրդ՝  
Բաղդն է անիրաւ:

Թշնամի՛ է քեզ եղել նա միշտ, միշտ  
Եւ հիմայ դաժան.  
Ճգմել է ուզում հոգիդ անհանգիստ,  
Հոգիդ սրբազան:

Բայց դու մի վերջին ցնցումով ուժգին  
Նետւիր անարգել,  
Ճակատիր, նրա պողպատէ կրծքին,  
Եւ զարկեցիր՝ մէկ էլ:

Վառում են նայիր, երկնի ափերում  
Լոյսերը հեռի.  
Քո արշալոյսի վերջին գիշերում—  
Դու մէկ էլ վառւի:

Եւ քո մեծ հոգով անյաղթ, դիմադիր,—  
Ծառս եղիր՝ հզօր...  
Կամ յաւերժօրէն, յաւիտեան յաղթիր,  
Կամ մեռիր այսօր:

1915.

Ազգ իմ, հալածւած երկւորից երկիր  
Ձեռքերիդ շղթայ՝  
Քայլում ես անպարտ՝ յաւերժ տարագիր—  
Դէպի Գողգոթայ:

Իմ վեհ ժողովուրդ, դարեր կրեցիր  
Սոսկում ու հարւած,  
Բիւրաւոր անգամ եղար ցան ու ցիր,  
Օջախդ աւերւած:

Բայց չխեղդեցին լքումի ամպեր  
Յոյսդ ճշմարիտ,  
Յետ դարձար նորէն հպարտ ու համբեր,  
Կեանք տւիր երկրիդ:

Արհամարեցիր աւերն անօդուտ,  
Լքումն աններում,  
Եւ ծաւալեցիր դանձերը հոգուդ  
Բիւր արձաններում:

Մեծ Թոխքներիդ գրքերում անմահ  
Մարմին տւեցիր.  
Երազներդ վեհ մասունք ես հիմայ,  
Սրբեր լուսածիր:

Ինչքան գետնափոր խցերումդ գիտեմ  
Մզլած ձեռագիր,  
Պաշտում են նրան, ծնրում նրա դէմ  
Ու պագում երկիր:

Դո՛ւ՝ հոգիապաշտ, դո՛ւ լոյսի տաճար—  
Ազգ իմ սիրագրաւ.  
Ազգ իմ ստեղծող ու մեծահանճար,  
Աստուածածարաւ...

Քանդում են հիմայ տաճարները քո  
Ու սրբապղծում,  
Ուզում քեզ թաղել աւերի ներքոյ,  
Սոսկումի ծոցում:


Օ՛, խղճս հպարտ՝ չար դահիճներիդ  
Կորած են նոքա,  
Անմահ ես հոգով, յուսով ճշմարիտ,  
Դո՛ւ, անյաղթ հսկայ:


Կըքանդեն նոքա, կ'կորչեն անհետ  
Իրենց աւերում...  
Դու կայիր, դու կ'սոս, կլինես յաւէտ  
Քո սուրբ աշխարհում:

1916.

|                                          |    |
|------------------------------------------|----|
| — Յառաջաբանի տեղ . . . . .               | 3  |
| Ա Ր Ի Լ Ն Է Ջ Ե Ր                        |    |
| 1 Gloria victis. . . . .                 | 7  |
| 2 Ծեր կամաւորը . . . . .                 | 9  |
| 3 Ես չեմ հասկանում . . . . .             | 10 |
| 4 Պատերազմ . . . . .                     | 11 |
| 5 Մեր կորուստները հսկայ . . . . .        | 12 |
| 6 Իս. Իսահակեանի յիշատակին . . . . .     | 13 |
| 7 Ո՛չ փառք և ո՛չ դանձ . . . . .          | 16 |
| 8 Գայլը . . . . .                        | 17 |
| 9 Պապիկին . . . . .                      | 18 |
| 10 Քո դէմքն այնպէս . . . . .             | 20 |
| 11 Ե՞րբ կը դառնաս . . . . .              | 21 |
| 12 Նամակը . . . . .                      | 22 |
| 13 Ճամբի ալմազթել . . . . .              | 23 |
| 14 Ոտնահարւեց . . . . .                  | 24 |
| 15 Զուլեցէք, ձուլեցէք զնշակներ . . . . . | 25 |
| 16 Թանձր քօղով . . . . .                 | 26 |
| 17 Մի ողբացէք . . . . .                  | 27 |
| 18 Այս պայքարին մեծ . . . . .            | 28 |
| 19 Կը գրկէք մէկ օր . . . . .             | 29 |
| 20 Տիրոջ թախիժը . . . . .                | 30 |
| 21 Նաւաստիներ . . . . .                  | 31 |
| Ո Ղ Ջ ա կ է զ                            |    |
| 22 Հերոսերգ . . . . .                    | 35 |
| 23 Լոկ մի անգամ . . . . .                | 36 |
| 24 Գթութեան քոյրը . . . . .              | 37 |
| 25 Դէպի հայրենիք . . . . .               | 39 |
| 26 Կոյր մանուկը . . . . .                | 41 |
| 27 Տիրեց ինձ մրմուռ . . . . .            | 42 |
| 28 Ես սիրում եմ . . . . .                | 43 |
| 29 Թօթափիր հոգիս . . . . .               | 44 |
| 30 Երանի նրան . . . . .                  | 45 |

|                                      |    |
|--------------------------------------|----|
| 31 Այրինքը . . . . .                 | 46 |
| 32 Երկու այրի . . . . .              | 49 |
| 33 Հեքիաթ . . . . .                  | 50 |
| Գ Ե Ր Ո Լ Թ Ի Լ Ն                    |    |
| 34 Հաղար ափսոս . . . . .             | 55 |
| 35 Է՛, առաջ բարի . . . . .           | 57 |
| 36 Երազ . . . . .                    | 59 |
| 37 Ազատութիւն . . . . .              | 60 |
| 38 Գերութիւն . . . . .               | 61 |
| 39 Քունը . . . . .                   | 62 |
| 40 Աքսորը . . . . .                  | 63 |
| 41 Աքսորականի երգը . . . . .         | 64 |
| 42 Սառած երկրից . . . . .            | 67 |
| 43 Բանտիս միջին այս պահուն . . . . . | 68 |
| 44 Քամին է բերում . . . . .          | 69 |
| 45 Ո՞ւմ եմ կարօտել . . . . .         | 70 |
| 46 Ինչպէս տերև . . . . .             | 71 |
| Թ Ղ Ն ա մ ո լ Ն                      |    |
| 47 Թշնամուն . . . . .                | 75 |
| 48 Թշնամիներին . . . . .             | 78 |
| 49 Օ՛յ ետ նահանջէք . . . . .         | 79 |
| Յ ա Ղ Թ Ո Լ Թ Ի Լ Ն                  |    |
| 50 Ճամբան է երկար . . . . .          | 83 |
| 51 Եւ անն նոքա . . . . .             | 84 |
| 52 Օրհնութիւն քեզ . . . . .          | 85 |
| 53 Ազատութիւն . . . . .              | 86 |
| 54 Ազգ իմ հալածւած . . . . .         | 90 |





Պատճառն է՝ արագությամբ կամ  
կողմնակի հեռուաց տեխնոլոգիաներ

- 1) Երեք տոկոս
- 2) Օտար զառանգից Ս. (Երևանի, Բաղման, Մակոյ  
սկի, Սոյազուր և այլք)։
- 3) Օտար զառանգից Բ. (Բոգիբ, Վերին, Լամարթին)
- 4) Բանաստեղծություններ (Լիակ, Ճագ)։
- 5) Արձակ բանաստեղծություններ։
- 6) Պատկերներ Հազարի յեանից։

ԳԻՆՆ Է 45 Կ.

Ծախսում է բոլոր պրակտիկները

Պաշտոնը հրատարակելի մաս

Կիև, Գլխավոր 32, Կ. ր. Դյակոնով, Ալեք

0

ՀՀ Ազգային գրադարան



NL0372396

60611